3200

491.99-8
U-44

1889

108
1108
«Обучение родному языку»

Հրատարակուած Կենդրոնական Գրավաճառանոցի:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԱՑԲԲԵՆԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԻՊ

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
262
MUSEUM ASIATICUM ACADEMIAE SCIENTIARUM IMP.
Գին 1 ռուբ. 25 կ.

ԹԻՖԼԻԶ

Տպարան Մովսես Վարդանեանի:

Типографія М. Вартаняна Тройц. пер. д. № 11

1889

491.99-8
2002

Сагт
1108

1108.

491.99-8
Ա-44

Գ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ԱՅԲՈՒԵՆԱՐԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԻՊ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԹԻՖԼԻՁ
Տպարան Մովսես Վարդանեանի:
1889

Доз. ценз. Тифлисъ, 3-го Марта 1889 года.

Типографія М. Вартанянца, Тройц. пер. д. № 11.

5-0480-ստ

ՄԵՍ ԱՍՍՌ Գիտությունների
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. Մեսրոպի անվան
им. А. Мясникяна

36215-66

արտ

տատ տար արտ

մարտ

մարտ մատ տամ ատամ արամ

—

մարտը

մարտը, տատը, մատը, արտը, արամը,

—

մարտը տալիս է

վիս է

տալ, լալ, էլ, սէլ, իմ, սիմ, միս, մաս,
էր, սէր, տէր, սար, սալ, լար, սիրտ,
ամիս, սամի, սարի, տարի, մարի, մասիս,
մասրի, մատիտ, մարիամ.

Մարտը ամիս է.
Մի ամիս է մարտը.
Մասիսը սար է.
Արամ, արի, մի մատիտ տամ.
Մարիամ, արի, իմ մատիտը տար.

Մարտը տալիս է ճնծաղիկ

ճնծաղիկ

ճի, ինճ, տանճ, սանճ, ծալ, ծամ, ծիտ, ծիծ, սան, նան, տակ, տիկ, կէս, մէկ, կամ, կալ, լակ, կար, նալ, նամ, աղ, տաղ, մաղ, ծաղիկ, կաղին, իլիկ, կաղնի, կարաս, մինաս.

Մարտը ճնծաղիկ է տալիս։
Մարտ ամիսը ճնծաղիկ է տալիս։
Ճնծաղիկը մարտին կըլինի։
Մարտ ամսին ճնծաղիկ կըլինի։

ա. է. ը. ի.
մ. ր. տ. ճ. ն. կ. ղ. ծ. լ. ս.
Մ. Ր. Տ. Ճ. Ն. Կ. Ղ. Ծ. Լ. Ս.

Ապ—րի—լը կա—պոյտ մա—նու—շակ.

պ. շ. ու. ոյ.
պապ, պաս, պատ, կապ, ուր, ում, ուլ,

էշ, շուն, ուշ, շուտ, նուշ, կոյս, լոյս, ծոյլ,

կատու, կաշի, շամամ, մաշիկ, Արշակ.

կապաճ, անկապ, պանիր, կապոյտ, Ղուկաս.

Ապրիլը տալիս է կապոյտ մանուշակ։
Մանուշակը կապոյտ ծաղիկ է։
Կապոյտ մանուշակը ծաղկում է ապրիլին։
Ապրիլին ծաղկում է կապոյտ մանուշակը։

ա. է. ը. ի. ու. ոյ.
լ. ծ. կ. ճ. ղ. մ. ն. շ. պ. ս. տ. ր. ւ.
Ա. Է. Ը. Ի.
Լ. Ծ. Կ. Ճ. Ղ. Մ. Ն. Շ. Պ. Ս. Տ. Ր.

ուլ

էշ

շուն

Մայիսին բացւում էվարդը.

այ. ց. վ. դ.

այս, այդ, այն, բայց, բան, բոյս, բաց.

լաց, ցուրտ, դա, դու, դաս, սարդ.

վաղ, վաշ, վար, վուշ, սայլ, մայր, այծ.

այսպէս, այդպէս, այնպէս, վայրի.

Վարդը մայիսին է բացւում:
Մայիսին վարդը բացւում է:
Կաթմիր վարդը բացւում է մայիսին:

ա. է. ը. ի. ու. ոյ. այ.

բ. գ. լ. ծ. կ. ճ. ղ. մ. ն. շ. պ. ս. վ. տ. ր. ց. ւ.

Ա. Է. Ը. Ի.

Բ. Գ. Լ. Ծ. Կ. Ճ. Ղ. Մ. Ն. Շ. Պ. Ս. Վ. Տ. Ր. Ց. Ի.

այծ

Սոխակը երգում է անուշակ.

ո. է. գ. խ.

սով, ծով, կով, բոխ, խակ, խաղ, խամ.

խուլ, մուխ, մեխ, սեխ, գեղ, գիր, գոմ.

գոյն, գայլ, գողջ, գող, տող, ցեղ, ցեխ.

Գեղամ, Գրիգոր, գերի, խախալ, խաղող.

Սոխակը շատ անուշ է երգում:
Սոխակի երգը շատ անուշ է:

ո. աւ.

որ, որպէս, որդի, ոսկի, որբ, որդ, որս.

կաւ, խաւ, լաւ, ցաւ, նաւ.



կով

խոզ

Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն։

յ. ղ. ռ.

մեղ, ձեղ. եղ, խոզ, զոխ, զարդ, պարզ.

ռուս, ռումբ, կեռ, տառ, բառ.

յայտնի, յանկարծ, յատակ, յիսուն, Յիսուս.

լեզու, գազան, զանգակ, ռամիկ, ռեգին։

Յունիսն ու յուլիսը առատ ամիսներ են։
Ամառն ամեն բան առատ է լինում։
Ամառն անտառ, ձմեռը՝ դաշտ։

ա. ե. է. ը. ի. ո. ու. ոյ. այ.
բ. գ. դ. զ. լ. խ. ծ. կ. ձ. ղ. մ. յ. ն. շ. պ. ռ.
ս. վ. տ. ր. ց. ւ.

Ա. Ե. Է. Ը. Ի. Ո.
Բ. Գ. Դ. Զ. Լ. Խ. Ծ. Կ. Ձ. Ղ. Մ. Յ. Ն. Շ. Պ. Ռ.
Ս. Վ. Տ. Ր. Ց. Ւ.

Օգոստոսը տանձ ու խնձոր
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր։

օ. և. հ.

օր, օղ, օդ, օձ, տօն, հօր, մօր.

և, սև, խև, արև, տերև.

Օգոստոսին հասնում են շատ մրգեր։
Ես այդ ամսին իմ հօր հետ գնում եմ այգի։

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,

օձ

ուղտ

ձի

Հոկտեմբերը կարմիր դինին,
Նոյեմբերը—բողկն ու տակը։

Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունուարին ծածկւում սար ու ձոր,
Փետրուարին սկսւում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր։

ի. փ. ք.

ձիւն, սիւն, իւր, իւղ, գիւղ, շիւղ.

փակ, փոս, փառք, քար, քոյր, քեզ, գիրք.

արիւն, հարիւր, փափուկ, քաղաք.

Ձիւնը դեկտեմբերին է գալիս։
Նոյեմբերին էլ է ձիւն գալիս։
Սարերումը ձիւնը շուտ է գալիս։
Յունուարին շատ ցուրտ է լինում։

Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալւում է չորս շրջանում.
Այս պատճառով չորս ժամանակ,
Զորս եղանակ է մեզ բերում։

թ. չ. ճ. ժ. ջ.

թաթ, թուրթ, չիթ, չեչ, ճաթ, ճուրթ, ճաղ.

մաճ, ճաշ, ժամ, թեժ, խեժ, ժախ, ժեռ.

ջանք, ջուխտ, սաջ, քաջ, լանջ, ունջ, մունջ.

թանապ, ճանաչ, ջաղաց, ժառանգ, չամիչ.

թիւ, լրիւ, հաշիւ, տիւ, խստիւ.

Ծոյլը պատժի արժանի է։
Ճրագն իր տակին լոյս չի տալ։
Ինչ որ անես, առաջըդ կըգայ։
Սրած լաւութիւնը չի կորչիլ։



Մեր դասատան աշակերտների անունները.

եա

Տիգրան Արամեանց.
Արսէնիկ Գուրգէնեանց.
Յարութիւն Յովսէփեանց.
Գրիգոր Միքայէլեանց.
Դանիէլ Իսրայէլեանց.
Յովհաննէս Մարկոսեանց.
Սիմէոն Եսայեանց.

Աշխէն Հայկազունի.
Եղիսաբէթ Արծրունի.
Հայկանուշ Աղայեանց.
Վարսենիկ Շահնազարեանց.

Գրեցէք ձեր և ձեր ընկերների անուններն ու ազգանունները:

յ. անձայն

Ցղայ, երեխայ, ընծայ, հսկայ, արքայ, ճանպայ, օրևայ, տարևայ . . .

(նա) գայ, տայ, լայ, կայ, գնայ, մնայ, աղայ, կարդայ, իմանայ, մոռանայ, ուշանայ, խնդայ, ուրախանայ, հիւանդանայ, տկարանայ, հասկանայ, լաւանայ . . .

(Ես) եկայ, իմացայ, մոռացայ, ուշացայ, ստացայ, հասկացայ, ուրախացայ, վեր կացայ, վայր եկայ, կերայ, կշտացայ . . . .

Կիսաձայնաւոր.

հայ, վայ, չայ, փայ, Նոյ, հայր, մայր, վայր, ծայր, գայլ, սայլ, փայլ, այլ, բայց, այծ, լոյս, բոյս, կոյս, ծոյլ, թոյլ, նշոյլ . . .

Բաղաձայն.

յոյս, յոյն, յարդ, յարգ, յարկ, յիշատակ, յիշել, յանկարծ, յայտնի, յատակ . . . .

Վերացած.

սա, դա, նա, սրրա, դրրա, նրրա, (դու) ասա, աղա, արա, կարդա, խնդա, դնա, մնա, (օտար բառեր և յատուկ անուններ) խաթա, բալա. մաշա, բօշա, ուստա, Յուդա, Երեմիա, Իտալիա . . . .

ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐ.

ա՛. է՛. է՛. ը՛. ի՛. ո՛. օ՛. ու՛.

իւ. եա՛. եօ՛. ոյ. այ.

ԲՈԼՈՐԱԳԻՐ.

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ.

ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ.

ռ. ս. վ. տ. ր. ց. ւ. փ. ք. և. օ. ֆ

ԳԼԽԱԳԻՐ.

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Հ.

Ձ. Ղ. Ճ. Մ. Յ. Ն. Շ. Ո. Չ. Պ. Ջ. Ռ. Ս. Վ. Տ.

Ր. Ց. Ւ. Փ. Ք. Օ. Ֆ.

ՆՕՏՐԱԳԻՐ.

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ. ծ. կ. հ. ձ.

ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր. ց. ւ.

փ. ք. և. օ. ֆ.

ԾԱՂԿԱԳԻՐ.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ

Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ

Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք Օ Ֆ

ՇՂԱԳԻՐ.

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ

հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ տ

ր ց ւ փ ք և օ ֆ։

ԹՌՉՆԻԿՆԵՐ

ԱՂՈՒՆԱԿ

Ղո՛ւ-ղո՛ւ-ղո՛ւ,
Ա՛ղու-ղո՛ւ,
Նա՛կ, նա՛կ,
Ա՛-ղու-նա՛կ,
Թրռռռ...

ԿԱՉԱՂԱԿ

Չա՛ չա՛-չա՛,
Կա՛ չա-չա՛,
Ղա՛կ, ղա՛կ,
Կա-չա-ղա՛կ,
Թրռռռ...

ԾԻՏԻԿ

Ծիտ եմ, ծիտ եմ,
Ծըվըլում եմ,
Ճիկ, ճիկ, ճիկ,

Ոստոստում եմ,
Թրուչկոտում եմ,
Տիկ, տիկ, տիկ.
Արի, թեւիկ,
Արի, փետրիկ,
Որ ես դառնամ
Փոքրիկ ծիտիկ,
Փոքրիկ ծիտիկ,
Պիծիկ, միծիկ,
Թռռռ...

ՁՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը կապույտ մանուշակ,
Մայիսին բացւում է վարդը,
Սոխակը երգում անուշակ:
Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ Յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր,
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:
Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բորոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը բողկն ու տակը:
Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունուարին ծածկւում սար ու ձոր,
Փետրուարին սկսւում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:
Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալւում է չորս շրջանում.
Այս պատճառով չորս ժամանակ,
Ձորս եղանակ է մեզ բերում:

36215-66

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԵՍ ԱՍՍ ԳԱ դարձ
ГСС Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ա. անվ. Մ. Մասիսյանի



ԱՔԱՂԱՂ

Աքաղաղը կանչում է.
Ծուղրուղո՜ւ,
Ղո՜ւ—ղո՜ւ—ղո՜ւ։
Պառաւ նանը զարթնում է.
Տա՜—տա՜—տա՜.
Պա՜—պա՜—պա՜։
Աքլոր, ինչո՞ւ կանչեցիր,
Ինչո՞ւ նանին զարթեցրիր.
Ա՜խ դո՛ւ—դո՛ւ, ա՜յ ջո՛ւ—ջո՛ւ։

***

Ա՜խ նանի, ջան նանի,
Մեզ մի՛ վեր կացընի.
Թո՛ղ մի քիչ էլ մնանք,
Քնից լաւ կշտանանք։

Աքլորը շուտ է կանչում.
Աքլորը քեզ է խաբում.
Ա՜քլոր, ինչո՞ւ կանչեցիր,
Ինչո՞ւ նանին զարթեցրիր.
Ա՜խ դո՛ւ—դո՛ւ,
Ա՜յ ջո՛ւ—ջո՛ւ։

ԱԹԱԽՕՏ

Արեգակը դուրս է եկել
Պլսպլզալով.
Ցողքը հերթից ներս է ընկել
Ցողշողալով.
Ծիտը ծառին կըչկըչում է
Ծլվլալով.
Զորումն առուն քըչքըչում է
Վըշվըշալով.
Ծոյլ տղայի քունն է տարել
Խըռըմփալով.
Տրեխները շունն է տարել
Մըռմըռալով։

ԼՈՒՍԱՑԱՒ

Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին, ծիտն է ծառին, հաւն է թառին։ Աշխատաւոր, վե՛ր կաց բանի, ծոյլ տղայի քունը տանի։

Ինչո՞ւ աքլորը կանգնած է բակում, պինդ-պինդ կանչում է իր կուկուրիկուն։—Էնդուր որ վաղուց արևն է ծագել, բայց ծոյլ երեխան քնից չէ զարթել։ Դեռ չէ վեր կացել աղօթքն արել, դպրոցի դասը դեռ չէ սովորել։ Կանչում է աքլարն իր կուկուրիկուն, տղայոց պարտքը միտներն է ձրգում։

ԾԵԾՈՒԱԾ ԳԱՌՆԻԿ

—Ինչի՞ կուլաս դու, գառնիկ.
«Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ։
—Քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ.
«Մէկ չար պառաւ, ա՜խ, մայրիկ։
—Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ.
«Ծառի տակն էի, մայրիկ։
—Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ.
«Մեծ մահակով, ո՜հ, մայրիկ.
—Ո՞ր տեղիդ զարկեց, գառնիկ.
«Ոտիկներիս, ո՜ւհ, մայրիկ։
—Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ.
«Մէ՜... մէ՜... մէ՜... մէ՜...

ԾԻՏԸ ԵՒ ԲԱԶԷՆ

Ծիտը ծառին ծըլվըլում է.
Ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ։
Բազէն գլխին պտըտում է.
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ։

Ծիտը լռեց, ծիտը վախեց.
Վա՜յ, վա՜յ, վա՜յ։
Բազէ, թը՛ռռ. բազէ, թը՛ռռ.
Հա՜յ, հա՜յ, հա՜յ։
Բազէն թռաւ,
Բազէն փախաւ,
Ի՞նչ լաւ էլաւ,
Հէ՛, հէ՛, հէ՛։

Ծիտիկ մի՛տիկ, պիծիկ միծիկ,
Պըտպըտաւրիկ, շըլպըտաւրիկ,
Դու լաւ պրծար չար բազէի
Սուր ճանկերից. հա՜, հա՜, հա՜։

ՀԱՐՍԻ ՀԱՇԻՒԸ

Երկուշաբթի հաց կըթխեմ, երեքշաբթի լոշ կըթրջեմ, չորեքշաբթի լըւացք կանեմ, հինգշաբթի կար կըկարեմ, ուրբաթ օրը պաս կըկենամ, շաբաթ օրը ժամ կըգնամ, լոյս կիրակի փռանց-փռանց՝ կըզարդարւիմ կերթամ հօրանց։



Ա. Ր Ե Ւ

Արև, արև, եկ, եկ,
Զիզի քարին վէր եկ.
Սև-սև ամպեր, հեռացէք,
Արևին ճանապայ տըւէք.
Թողէք դա գայ մեզ մօտ.
Դրա լոյսին ենք կարօտ։
Կարմիր արև, եկ, եկ,
Նախշուն քարին վէր եկ։
Արևը յաղթեց ամպերին,
Շողքը ճըգեց սարերին.
Զիզի քարը, տես տես.
Պապղում է ոսկու պէս.
Սիրուն արև, միշտ եկ,
Զիզի քարին վէր եկ։

ՀԷՔԻԱԹ

1.

Ձմեռն էր. դիշերը երկար։

Գիւղնազ տատը՝ գլուխը քուրսու վրայ դրած՝ ննջում էր։

Երեխէքը վրայ թափուեցան, քունը փախցրին, որ իրանց համար մի հէքիաթ ասէ։

Նա էլ սկսեց.

«Էլել է չի էլել՝ մի սիրուն Արտուտիկ։ Կատուցը սուր՝ մեր Արշակի քթի նման։ Բմբուլը խուճուճ՝ Տիգրանի մազերի նման։ Թևերը փափկիկ՝ Շողիկի կռների նման։ Ահա այսպէս սիրուն էր Արտուտիկը։

—Բա ինձ նման ոչինչ չունէ՞ր, ասեց Վանին։

—Բա ի՞նձ, ձայն տուեց Հռիփսիկը։

—Ինձ էլ չասեցիր, տատի, լաց էլաւ Նազիկը։

—Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք, երեխէք, դեռ չեմ վերջացրել. ամենքիդ էլ բաժին կըտամ, ասեց տատը և շարունակեց.

«Աչիկներն այնպէս նախշուն էին, ինչպէս Վանինի աչքերը։

Կատարն այնպէս կարմիր էր, ինչպէս Հռիփսիկի թշերը։

Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս Նազիկի մատները։

—Ես ոտները չեմ ուզում, ասաց Նազիկը։

—Լաւ, ոտներ չեմ ասիլ. տոտիկները կուզէ՞ս։

—Չե՛մ ուզում, ես տոտիկներն էլ չեմ ուզում։

—Բա ի՞նչը կուզես, Նազիկ։

—Ես աչիկներն եմ ուզում։

—Աչիկներն ինձ է տուել տատը, քեզ չեմ տալ, գոչեց Վանին։

—Նազիկ, կուզէ՞ս՝ կատարը դու վերառ, տոտիկները ես կըվերցնեմ, ասեց Հռիփսիկը։

—Չեմ ուզում, ես աչիկներն եմ ուզում։

—Վանի, դու կատարը վերցրու, ես տոտիկները, իսկ Նազիկը՝ աչիկները։

— Ի՞նչ եմ անում կատարը. տատը ում ինչ որ տըւել է, այն է նրանը։

—Ճշմարիտ է ասում Վանին, ամեն կողմից գոչեցին երեխէքը։

Նազիկը գոհ չըմնաց, և վէճը երկար շարունակուեց։ Բայց տատը չէր լսում. նա գլուխը դրել էր բարձին եւ քնել։ Էլ չէին կարող զարթեցնել։ Վեր կացան իրանք էլ մտան տեղերը։

2.

Միւս երեկոյին երեխէքը էլի հաւաքուեցան տատի մօտ, որ շարունակի հէքիաթը։ Նա էլ սկսեց.

«Անցած դարնանը մեր պարտէզի ծառի վրայ մի սիրուն Կըկու կար։ Ես նըստած էի ծառի տակին, և դուք մէկ-մէկ եկաք ինձ մօտ։

Երբ որ Արշակը ներս մտաւ, Կըկուն կանչեց՝ «կո՛ւ—կո՛ւ»։

Եկաւ Շողիկը, ասեց՝ «պո՛ւ—պո՛ւ»։

Եկաւ Տիգրանը՝ ասեց՝ «տո՛ւ—տո՛ւ»։

Եկաւ Վանին, ասեց՝ «գո՛ւ—գո՛ւ»։

Եկաւ Հռիփսիկը, ասեց՝ «բու—բո՛ւ»։

Եկաւ Նազիկը, Կըկուն էլ ոչինչ չասեց, թռաւ գնաց...

—Օ՜խ, օ՜խ, Նազի՜կ, օ՜խ օ՜խ, Կըկուն քեզ համար ոչինչ չի ասել,—միաբերան ձայն տըւին երեխէքը։

***

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչո՞ւ Կըկուն իր համար ոչինչ չի ասել. և սկսեց լաց լինել։ Տատը նրան ասեց.

—Նազիկ, դիտե՞ս ինչու Կըկուն քեզ համար բան չասեց. նա վախեցաւ քեզ բան ասել։ Ինչ որ ասէր, դու չըպիտի հաւանէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալու, ինչպէս անցած երեկոյին։

—Տատի ջան, տատի, որ մէկ էլ Կըկուն գայ, ասա ինձ համար էլ մէկ բան ասի,—աղաչեց Նազիկը, և նրանից յետոյ շատ խելօքացաւ։

ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

1.

Անտառի խորքում մի ճօճ կար կապած և նրա մէջ մի մանուկ դրած։

Լաց էր լինում մանուկը։

Մայր չկար մօտը, որ ծիծ տար, հայր չկար՝ որ պահպանէր։

Անտառումը մարդ չկար։

Մի գթոտ պախրակով կաթնալից կըրծքով եկաւ ճօճի մօտ իր հորթուկի հետ և տխուր ձայնով երեխին ասեց.

Սիրուն երեխայ, ո՞րը ես մնացել,
Քո անբախտ մօրը գերի՞ են տարել.
Նա գնա՞ց, կորա՞ւ, էլ յետ չի գալու,
Էլ ո՞չ մի անգամ քեզ ծիծ չի տալու։
Նա քեզ փաթաթեց լայն տերևներով,
Ճօճի մէջ կապեց «նանիկ» ասելով,
Նա լաց էր լինում աղի արցունքով,
Իր վերջին նանիկն ասում էր լալով.

«Նանա՞, բալիկս, նանա՞,
Մեծատերև թաթաշոր,
Մանրատերև ոտաշոր.

Քամին կանի ժաժ կըտայ,
Պախրէն կըգայ ծիծ կըտայ.
Նանա՞, գառնուկս, նանա՞»։
Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,
Պահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պէս։

2.

Պախրան ծիծ տըւաւ երեխին։

Երեխան կշտացաւ ու քնեց։ Պախրան իր հորթը թողեց երեխի մօտ, իսկ ինքը գընաց արածելու, որ կաթը շատացնի և գայ երկուսին էլ ծիծ տայ։

Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան և նանիկ ասեց.

Նանա՞, մանկիկ, նանա՞.
Իմ մայրը քո մօր նման չի,
Ամեն խոտից կծել չի,
Ամեն ջրից խմել չի,
Ամեն տափի նստել չի։
Նա սարէսար ման կըգայ,
Որը կըգտնի ծիծ կըտայ.
Նանա՞, մանկիկ, նանա՞։

3.

Պախրան կուրծքը լիքը յետ դարձաւ արօտատեղից և ծիծ տըւաւ երեխին էլ, հորթին էլ։

Ով որ տարով կըմեծանայ, մեր երեխան օրով մեծացաւ։ Շատ չանցաւ, նա դուրս եկաւ ճօճիցը. մի օր չորեքթաթ տըւաւ, միւս օրը ոտքի կանգնեց։ Մի քանի անգամ սկըսհաց վեր ընկաւ, բայց շուտով ամրացաւ եւ սկսեց պախրի ետեւից վազվըզել։

4.

Մի թագաւորի որդի չէր լինում։ Երազումն ասացին. «Թագաւոր, Աստուած քեզ մի որդի պիտի տայ անտառի խորքումը»։

Մէկ անգամ անզաւակ թագաւորը որսի գնաց իր որսորդների հետ։

Շատ մարդ եկան, ոչինչ չըգտան, ոչ մի որս չըպատահեց նրանց։

Բայց որ հասան անտառի խորքը, այնտեղ մի պախրի հետք գտան և նրա մօտ երեխի ոտնատեղեր։

Ամենքը մնացին զարմացած և չէին հաւատում, որ երեխի կըլինի ոտնատեղերը. բայց թագաւորն իսկոյն յիշեց իր երազը և հրամայեց որսորդներին, որ երեխի հետքը քշեն, և ուր որ լինի, գտնեն նրան։

Որսորդները գնացին, և երկու ժամ չանցած՝ մի սիրուն տղայ բերին թագաւորի

մօտ եւ պատմեցին, թէ ինչպէս գտան նրան պախրի ծիծը ծծելիս։

Թագաւորը շատ ուրախացաւ։ Երեխին գրկեց, համբուրեց և անունը դրաւ Պախրատուր։

Պախրատուրը մեծացաւ թագաւորի պալատումը, լաւ ուսում առաւ, վերջը դառաւ թագաւոր, և մեծ զօրքով գնաց իր մօրը ազատեց գերութիւնից։



ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ Է.

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց թաք կացաւ.
Գիշերւայ մութը աշխարհս պատեց
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց։

Ամեն մարդ քաշուեց իր տունը մտաւ.
Ամեն երեխայ մօր գիրկը ընկաւ.
Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը բոբիկ, տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:
Բարի տան-տէրը վերևից նայեց,
Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց.
Եւ այնուհետև տարաբախտ տղան
Ունէր իր համար տէր ու տիրական:

Ա Ն Ձ Ր Ե Ի.

Անձրև անձրև, ցած արի,
Բլսցուր ցորեն ու գարի.
Բլսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Աւլէ փոշի, մաքրէ օդ:
Անձրև անձրև, ցած արի,
Գալըդ ամենուս բարի:

Ճ օ լ ի (արևաբեր)

Ճոլի ճոլի, ճոլ չըկայ,
Խաւիծ անեմ, եղ չըկայ,
Ճոլին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ:
Զրւան բերէք, դուրս հանենք,
Թոկ բերէք, կցան անենք,
Ձու բերէք, թաթին դնենք,
Եղ բերէք, վարսը քսենք:
Խոլը պատումն է ժանգոտել,
Ձևիչը տափումն է ժանգոտել,
Կանաչ դաշտերին ենք կարօտ,
Կարմիր արեւին ենք կարօտ:

Ն ո ւ ր ի (անձրևաբեր)

Նուրին Նուրին եկել է, Ալբա Հուրին եկել է,
Շիլա շապիկ հագել է, կարմիր գոտիկ կապել է.
Եղ բերէք, վարսը քսենք, ջուր բերէք, գլխին ածենք.
Մեր Նուրինի փայը տուէք, ուտենք, խմենք, քեֆ անենք:

Ծննդեան երգ

Ալելուիա՛, ալելուիա՛.
Զրօրհնէքը ճրագլուսով,
Զատիկը՝ արևլուսով.
Թէ քնած էք, վեր զարթեցէք,
Թէ զարթուն էք, լա՛ւ լսեցէք։

Մարիամ եկաւ լալով լալով,
Լալով լալով, մղկըտալով.
Լուսաթաթախ մանուկ ծնեց,
Ծով ու ցամաք լուսով պատեց։

Ձեր տունն է չորեքսիւնի,
Զորս սիւներից ո՞րն է սալի.
Սալը չարակամի սրտին,
Ապրի բարեկամի որդին։
Տունըշէն, տունըշէն,
Ձեր տղոց անունն ի՞նչ է.
—Հայկ ու Արամ է։

Դրանք նստեն մէկ սեղանի,
Գինի խմեն Նախջւանի,

Ձեր թշնամուն գետը տանի,
Գայլագռաւը աչքը հանի.
Մէկ պոչատ հաւ, մէկ ըստիլ եղ
Տըւէք, Ալելուիան տանի։

Ուտելիք և խմելիք

Մարդը ուտում է, խմում է, կրծում է, ծծում է, խրպշտում է, կուլ է տալիս, լամ-լամում է։ Գինին խմում են, իսկ քացախը ուտում են իրան գլխու կամ կերակուրի մէջ։ Կաթը բրթում ուտում են իրան գըլ-խու և թէյի հետ խմում են։ Երեխան ծծում է մօր կաթը։ Մսաջուրը, խաշուն, շորւան, թանէսպասը, փթրուկը, մախո-խը ուտում են և խրպշտում են։ Միսն ուտում են, իսկ ոսկորը կրծում։ Դեղը խմում են, եթէ ջրի է, իսկ դեղահատերը

կուլ են տալիս։ Պինդ կերակուրներն ու-տելիս ծամում են, բայց ատամ չունեցողները լամլամում են։ Մատակը ծամում են որոճող ուղտի նման։ Շունը լակում է, լափում է։

Գդալ-փոխ

Ամառն էր։ Հունձն ընկել էր։ Մէկ լոռեցի և մէկ աշտարակցի միասին հունձ էին անում։ Ճաշի ժամանակ նրանց համար մածուն բերին մի մեծ մաթրաթով, բայց երկու գդալի տեղ մէկն էին բերել։

Երբ որ մածնի բրթուճը պատրաստեցին, աշտարակցին ասեց.

—Գդալը մէկ հատ է. արի գդալ-փոխ անենք, գդալ-փոխ ուտենք։

Լոռեցին չը համաձայնեց, ասեց.

—Թո՛ղ ես գդալով ուտեմ, դու ձեռով կեր։

—Ո՛չ, խպատասխանեց աշտարակցին։ Որովհետև գդալ-փոխ չես ուզում, արի մէկ բան ասեմ, այնպէս անենք։ Ով որ մեղանից եօթը գիւղի անուն տայ վրայ-վրայ, շուտ-շուտ, գդալով նա ուտի։

—Լա՛ւ. առաջ ես կասեմ, ասեց լոռեցին ու սկսեց.

—Հէ՛, Լո՛...ռի. հէ՛, Ո՛ւ...զո՛ն...լա՛ր...

Լոռեցին միայն երկու գիւղի անուն տրւեց, այն էլ չը կարողացաւ շուտ-շուտ ասել ու սուս կացաւ։ Յետոյ աշտարակցին սկսեց, և կարկտի պէս վրայ տրւեց.

Ուշի—Ուշական
Փարպի—Բիրական
Թալին—Թալիշ—Մատարա
Գդալի պոչը դէսն արա։

Ասեց ու գդալն խառաւ լոռեցու ձեռքիցը։ Լոռեցու բերանը մնաց բաց. բայց էլ ի՞նչ կարող էր անել. խաղը տանուլ էր տրւել...

Շուտասելուկներ

1. Ուսուցիչն ուսուցչին ասեց սնուցիչ
Սնուցիչն ուսուցչին ասեց ուսուցիչ։
2. Ծտի ճուտը ճմբան ծերին ճիտը ծուռ։
3. Ակնակապ Ակոբ ապէր դու ինձ համար
մի ջուխտ ակը կապի ես քեզ ասեմ քեզ
արքայութիւն ակնակապ Ակոբ ապէր։

Խելօք գլուխը

Բերանն ասեց. ես ամեն ինչ կուտեմ, կըխմեմ.

Գլուխն ասեց. Հը՞մ։

Ձեռքն ասեց. ես ամեն ինչ կըշինեմ, կըքանդեմ.

Գլուխն ասեց. Հը՞մ։

Լեզուն ասեց. ես ինչ ուզեմ կասեմ, կըպատմեմ.

Գլուխն ասեց. Հը՞մ։

Ոտքն ասեց. ես ամեն տեղ կերթամ, ման կըգամ.

Գլուխն ասեց. Հը՞մ։

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը ասացին գլխին.

—Ինչո՞ւ ես «Հը՞մ» անում։

Գլուխը պատասխանեց.

—Ի՛նչ անէք չանէք, առաջ՝ ինձ պիտի հարցնէք։

Բերանը մնաց բաց, իսկ լեզուն կըմ-կըմալով ասեց.

—Հա՜... ըղըղրդ, ըղըղրդ է ասում գըգրգըլուխը...

Ոտքով ման եմ գալիս,
Ձեռքով աշխատում,
Աչքով տեսնում եմ,
Ականջով լսում.
Իսկ իմ չարն ու բարին,
Իմ լաւն ու վատը
Ո՞վ է իմանում.
—Խելօք գլուխս։

Հինգ զգայարանք

Ես աչքով տեսնում եմ,
Ականջով լսում,
Քթով հոտ եմ առնում,
Լեզուով ճաշակում.
Իսկ ցուրան ու տաքը,
Կոշտն ու կակուղը
Ինչո՞վ եմ զգում.
—Բոլոր մարմնով եմ շոշափում։

Արհեստ ընտրող Մանուկը

Թորոսի որդին մի ծոյլ տղայ էր. ոչ գիր էր սովրում և ոչ մի արհեստ։

—Ի՞նչ արհեստ սովրիմ,—փնթփընթում էր նա.—կլեկչութիւնը շատ լաւ արհեստ է, բայց բոբիկ ոտքով ամանում կանգնել, արագ պտըտել, դա այնքան հեշտ չէ։ Աւելի հեշտ է փուքսի փչելը, բայց այդ իմ ձեռքում երկար չեն թողնիլ։ Վարպետ էլ դառնամ, ի՞նչ եմ անելու. պէտք է մատներով փոքր ինչ բամբակով տաք-տաք

պղնձին նաշադիր քսեմ, ձեռքերս այրե՞մ։ Չէ՛, այդ իմ բան չէ։

—Դարբնի մօտ կերթամ. այնտեղ էլ փուքս կայ, ձմեռն էլ տաք է. բայց մեծ ուժ պէտք է այդ գործի համար։ Անհագին մուրճով երկաթը ծեծել, որ նա տափակի,—ես այդ չեմ անիլ, ինչ կուզի լինի։

—Նալբանդը լաւ է։ Մեխի ծայր սրել և պայտեր շտկել, այդ շատ դժուար չէ. բայց մէկ ամեհի ձիու ոտք բռնել, ծնկանը դնել—երկիւղալի է. ձիու աքացին իմ ընկերների ապտակից թունդ է։ Չէ՛, իմ կարծիքով դա լաւ արհեստ չէ։

—Դերձակութիւնը մաքուր արհեստ է. լաւ միտս ընկաւ։ Բայց ի՞նչ եմ ասում. ամբողջ օրերով ծալապատակ նստել, գլուխ քաշ գցած կարել ու կարել, ոչ խաղալ կըլնի և ոչ վազվզել։ Չէ՛, դա էլ բան չէ։

—Ինչո՞ւ չըգնամ որմնադիր դառնամ; բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այնտեղից կանչեմ.—«Քար ու կիր տըւէք, աղիւս ձգեցէք»։ Այսպէս կըգոռամ և կըհրամայեմ, որ աշխարհք տեսնի, թէ ես վար-

եղա եմ, գործս լաւ գիտեմ։ Բայց վա՛յ թէ յանկարծ այդ բարձր տեղից ոտքս սկըսի և թրմփալով ներքև գլորւիմ։ Զէ՛, այդ հեշտ գործ չէ և ոչ իմ բանն է։

—Երևի չըկայ մի այնպէս արհեստ, որ ես հաւանեմ, գնամ սովորեմ։ Թէ հիւսն դառնամ, ոտքս կըկտրեմ։ կօշկակար դառնամ, ձեռքս կըծակեմ։ ոսկերիչ դառնամ, մատներս կայրեմ։ Թէ բրուտ դառնամ, ցեխ պիտի կոխ տամ։ վարժարան գնամ, գիր պիտի սովրեմ։ Զէ՛, իմ կարծիքով, ամենից լաւ է՝ ոչինչ չըշինեմ, ոչինչ չըսովրեմ։ Բայց այնուհետև ես ի՞նչ կըդառնամ։

Ծոյլ աղջիկ

Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է,
Բամբակը կորիզոտ է.
Մետաքս պիտի որ մանեմ,
Մատակ պիտի որ ծամեմ։
Կտերը տիտիկ անեմ,
Անցնողին մտիկ անեմ։
Ուտեմ, խմե՞մ,
Մթնի՞, քնեմ։

Առածներ

Իմացողին մին, չիմացողին հազար ու մին։—Իմացողին մէ՛կ ասա, չիմացողին հա կա՞ց, հա՞ ասա։—Սևին սապոնն ի՞նչ անի, խևին խրատն ի՞նչ անի։—Ով որ երգի ամառը, նա պար կըդայ ձմեռը։—Մի բաժակ ջուր, ով ուզի՝ տուր։—Էսօրւայ փուշը, էգուցւայ նուշը։ Հացն ուտելով, բանն անելով։ Ապրել կայ՝ երկաթ է, ապրել կայ՝ արծաթ է։ Ձուի գողը ձիու գող կըդառնայ։ Տաշած քարը գետնին չի մնալ։ Ծերանաս, ծերի պատիւն իմանաս։ Կուշտը քաղցածին մանր կըբրթի։

Ուլերն ու գայլը

Լինում է չի լինում մի այծ։ Այս այծն անտառումն իրան համար տուն է շինում եւ իր փոքրիկ ուլերի հետ բնակում է նրա մէջ։ Ամեն առաւօտ այծը դուրս է գնում արածելու։ Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին. «Ո՛րդիք, դռները փակեցէք, հանգիստ կացէք եւ եթէ դրսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»։ Ասում է ու գնում։ Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթնով լցնելուց յետոյ այծը տուն է գալիս։ Տան դռները փակ են։ Նա պոզերով դուռը ծեծում է ու կանչում.

«Զալիկ-մալիկ ուլիկներ,
Զալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէք բացէք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերը բաց են անում դուռը։ Մայրը ծիծ է տալիս նրանց եւ կրկին գնում արածելու։

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը. նա մտքումը դնում է, որ խաբելով ներս մտնէ ուլերի վարիսը, երբ մայրն այնտեղ չլինի։ Մի օր, երբ այծը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթով դռանը խփում է ու կանչում.

Զալիկ-մալիկ ուլիկներ,
Զալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէք բացէք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերը մի լաւ ականջ են դնում. նրանք հասկանում են որ դուռը թխկթխկացնողն իրանց մայրը

չէ եւ պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորի՛ր հեռացի՛ր այդտեղից. մեր մայրը բարակ ձայնով ու քաղցր է մկրկում, դուռն էլ պոզերով է ծեծում»։ Ասում են ու դուռը բաց չեն անում։ Գայլը թողում հեռանում է։ Փոքր ժամանակից յետոյ գալիս է մայրը. նա գտնում է ուլերին, որ դուռը բաց չեն արել։ —«Դուք շատ լաւ էք արել, որդիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ՝ նա ձեզ ամենիդ էլ կուտէր։

Պառաւն ու այծը

Կար չըկար երբեմրն
Մի աղքատ պառաւիկ,
Ունէր մեր պառաւը
Կաթնատու այծիկ.
Զալիկ-մալիկ,
Կաթնատու այծիկ։
Պառաւը ձրմեռը
Այծիկը պահեց,
Իր բերնի պատառը
Նըրա հետ կիսեց.
Սիրով—յօժար
Նըրա հետ կիսեց։
Երբ ձիւնը հալեցաւ,
Բլսաւ կանաչ խոտ,
Պառաւն իր այծիկը
Դուրս տարաւ արօտ.
Ուրախ — զըւարթ
Դուրս տարաւ արօտ։

Թանձր մառախուղը գետինքը պատեց,
Պառաւի առջեւից այծը կորցրեց.
Ափսո՜ս, ափսո՜ս,
Այծը կորցրեց։

Պառաւը լաց Էլաւ, իսկ գայլը օռնաց,
Մոլորուած այծիկը բարձր մրկրկաց.
Մրկը՜կ, մրկը՜կ,
Այծը մրկրկաց։

Գայլն իսկոյն մօտեցաւ այծին շալակեց,
Պառաւը ետեւից բարձրաձայն գոչեց.
«Հա՛յ-հա՛յ, վա՛յ-վա՛յ»,
Բարձրաձայն գոչեց։

Խեղճը մնաց կանգնած, մի փունջ խոտ ձեռին,
Անմխիթար ձայնով կանչելով այծին.
«Ե՛կ—եկ, եկ—եկ»,
Կանչելով այծին։

Ճախարակ

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,
Մանի՛ր սիպտակ մալանշներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Ձէթ եմ ածել ականջներըդ,
Նոր շինել եմ շրտուլիկ,
Դէ՜հ, շուտ շարժի՛ր լայն թեւերըդ,
Ոստեր շինիր սրբուլիկ։

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,
Լիսեռնիկդ պտրտիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վերայ փաթաթի՛ր։

Տիգրանիկս գուլբա չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաբրիէլս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։

Մանի՛ր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ փաթիլներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Զրուալ չունինք, չաթու չունինք,
Ոչ սամոտէն, ոչ պարան,

Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
Կարուել է ամեն բան։
Դեռ հարս էի, որ գործեցի
Քանի կարպետ, խալիչա,
Բայց դրանցից շուտ զրկուեցի,
Հիմա չունիմ մի քեչա։
Կարմիր օրըս երբ սևացաւ,
Եւ պարտք մնաց թէև քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սևցաւ,
Եկաւ տարաւ ամեն ինչ։
Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Հանելուկ

Օհանն ու Վանին հանելուկներ էին ասում։ Ինչ որ մէկն ասում էր, միւսը գտնում էր։ Վերջը Օհանն ասեց.

—Այն ինչն է. «Ցակը քար է, քար չէ. գլուխը քար է, քար չէ. խոտ կուտի, կով չէ. ձու կածի, հաւ չէ»։

Վանին շատ մտածեց, շատ բանի անուն տրուեց, չեղաւ, չըգտաւ։ Յետոյ ասեց. չեմ գտնում, ասա տեսնեմ ինչն է։

—Դէ մի քաղաք տուր, ասեմ։

—Երևանը քեզ։

—Չեմ ուզում Երևանը։

—Շուշին քեզ,

—Շուշին էլ չեմ ուզում։

—Ալէքսանդրապօլ, Նուխի, Բաքու, Նախջըւան։

—Չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում։

—Բա ո՞րը կուզես, Օհան։

—Թիֆլիզը։

—Էհ, քեզ լինի, դէ ասա։

—Դեռ ականջ դիր։ Ուտեմ խմեմ Թիֆլիզ, հագնեմ մաշեմ Թիֆլիզ։ Ես մի քահ-

լան ձիու վրայ նստեմ, դու մի լղար ջո-
րու վրայ։ Ես ուտեմ մածուն ու կաթ, դու
ուտես բորբոնած ճաթ։

—Բաւական է, դէ ասա։

—Ասեմ։ այն է, որ վրան կանգնում
ենք ու ասում։ «Կորա՛, կորա՛, պապոնց տունն-
կորա՛, կորա՛, պապոնց տունն»։

—Հա՛, իմացայ, կրիան է։

Հիմա դուք ասացէք, թէ հանելուկներ գիտէք։

Բառախաղ

Պողոսն ու Պետրոսը բառախաղի էին տալիս։
Պողոսը վարժուած էր, իսկ Պետրոսը նոր էր սովորում։
Ահա թէ ինչպէս էին խաղում.

Պողոս. Պետրոս, ասա՛—տունը՞.
Պետրոս. Տունը՞.
Պողոս. Քեզ կծի շունը՞։
Պողոս. Ասա՛—դուրը՞.
Պետրոս. Դուրը՞.
Պողոս. Ընկնիս ջուրը։
Պողոս. Ասա՛—պա՛ս.
Պետրոս. Պա՛ս.
Պողոս. Ուտես թանէսպա՛ս։
Պետրոս. Էլ չեմ ասում. հիմա ես կըհարցնեմ քեզ։
Պողոս. Լա՛ւ, հարցրու։
Պետրոս. Ասա՛—ծի՛ւ.
Պողոս. Ծի՛ւ։
Պետրոս. Ուտես մախոխ։
Պողոս. Այդ չեղաւ, Պետրոս։ Ես ասում եմ ծիւ, դու
ասում ես մախոխ. այդ թ՚ինչպէս կարելի է.
տեսնում ես նման չեն։ Դեռ սպասիր, էլի ես
կըհարցնեմ—Ասա՛—ծիւ է.
Պետրոս. Ծիւ է.
Պողոս. Պետրոսն անմիտ է։
Պետրոս. Է՜հ, էլ չեմ ասիլ։ Ես անմիտ չեմ։
Պողոս. Լաւ, շարունակենք, էլ այդպէս չեմ ասիլ։ Ա-
սա՛—հաւ է.

Պետրոս. Հաւ է.
Պօղոս. Պետրոսը լաւ է։
Պօղոս. Ասա—սանձ.
Պետրոս. Սանձ.
Պօղոս. Պետրոսն ուտի տանձ։
Պետրոս. Հիմա ես կըհարցնեմ. ասա—ամբ.
Պօղոս. Ամբ.
Պետրոս. Շաքարը ծամբ։
Պետրոս Ասա—հաց.
Պօղոս. Հաց.
Պետրոս. Մի քիչ կաց։
Պօղոս. Էհ, բաւական է, դու լաւերը չես իմանում։

Ծառերի գանգատը

Մեր տըւած փայտից կրակ են անում, տուն տաքացնում, թոնիրը վառում, կերակուր եփում, փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում. այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Մեր գերաններից շինում են տներ, դռներ, մարաքներ, ժամեր ու վանքեր, մեր տախտակներից. յատակ, առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նստարան, դուռ ու պատուհան և այլ շատ տեսակ կահ ու կարա-

սիք։ Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Մեր գերաններից ու տախտակներից կամուրջ են շինում՝ գետերով անցնում. սայլեր են շինում՝ ամեն ինչ կրում. գութան են շինում՝ հողերը հերկում. լուծ, սամի շինում՝ եզ, գոմէշ լծում. օրօրոց շինում՝ մանկիկ օրօրում. քանոն են շինում՝ տետրակներ տողում. նաւեր են շինում՝ ծովի մէջ լողում։ Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում։

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խընձոր. նուռ ու սերկևիլ, կեռաս ու սալոր. դեղձ կարմրաթուշիկ, ծիրան անուշիկ։ Հապա խաղողը՞... և քանի՞ տեսակ. կանաչ ու կարմիր, թուխ-թուխ ու սպիտակ. և այդ ամենը մարդիկն են ուտում։ Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում։

Խելօք մանուկներ, դուք որ մեծանաք, մեզ խնայեցէք, մեզ պահպանեցէք, և ձեր

հանդերում, ձեր պարտէզներում ծառեր տնկեցէք։

Ուսումնարան

Դաշտը սիրուն է դալար բոյսերով
Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով.
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով։

Սիրուն է ծառը կանաչ ճղներով,
Փունջ-փունջ կախուած իւր պտուղներով.
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իր առաքինի, խելօք սաներով։

Ստուած, պահպանիր դու շատ օրերով
Մեր անդաստանը իր մշակներով.
Եւ մենք նորանում զուգւինք, զարդարւինք
Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով։

Ծիծեռնակ

Խեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի հանգստանում, այլ միշտ թռչելով, դէս դէն ընկնելով նիւթ է հաւաքում։

Նիւթ է հաւաքում—խոտ ու կաւ կրում, իր բունը շինում, ըմբուլով լցնում, լաւ փափկացնում ու մէջը մտնում։

Մտնում է մէջը, երեք ձու ածում և երեք շաբաթ վրան թուխս նստում, ձագուկներ հանում։

Փափկիկ ձագերը դուրս եկան թէ չէ, մայրը թռչում է, դէս ու դէն ընկնում, մրժեղներ բերում, նրանց կերակրում։

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, սիրուն ձագերը թեւաւորւում են, ընից դուրս թռչում և իրանց մօր հետ ճանապարհ ընկնում,—լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գնում։

Ձմեռն անցնում է, գարունը մտնում։ մեր ծիծեռնակն էլի գալիս է իր բունը գտնում, ճչում, ծլրլում, քանդւածը շրջակում, կարկատում, շինում, նոր ձուեր ածում, նոր ձագեր հանում, պահում մեծացնում, աշնան ժամանակ, առաջւայ նման ճանապարհ ընկնում,—լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր

սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գնում։

Երգ պանդխտի

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ։
Ա՜խ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս՝ Աշտարակ.
Անդ շինիր քո բունը—Հայրենի կտուրի տակ։
Անդ հեռու ալեւոր Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն սպասում է օրէցօր։
Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ բարեւ արա,
Ասա, թող նստի լայ իւր անբախտ որդու վրայ։
Դու պատմիր, թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով կեանքս մաշուել, եղել կէս։
Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս։
Շուտով սառ հողի տակ կըպառկեմ այստեղ մենակ.
Թողնելով հօրս սրտում միշտ ցաւալի յիշատակ։
Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, գնա արագ
Դէպի Հայոց աշխարհը, ծնած տեղս—Աշտարակ։

Մեղուն և Մարդը

Մեղուն մէկ անգամ հարցրեց իր տիրոջը.

—Քո կենդանիներից ո՞րն է ամենից օգտակարը։

—Գիտեմ։ դու երևի կարծում ես, թէ ամենից օգտակարը դու ես, բայց սխալւում ես, պատասխանեց տէրը։

—Ի՞նչպէս, տէր. ո՞րն է այն կենդանին, որ ինձանից աւելի օգտակար է։

—Ոչխարը։

—Այդ հաշիւ չէ, տէր. ոչխարը իմ հասակակիցս չէ։ Նա մի ահագին կենդանի է, իսկ ես մի միջատ։ Դու պէտք է ինձ իմ ընկերների հետ համեմատես։

—Շատ բարի։ Ներամը քեզ պէս փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս։

—Ներամը ո՞րն է։

—Ներամն այն իմաստուն որդն է, որ մեզ համար իր նման քնքուշ մետաքս է շինում։

—Հա՛, իմացայ։ Այդ այն շատակեր ճիճուն չէ՞, որ անդադար կերակրում էք թըթան տերևով։

—Նա ինքն է։

—Բայց գիտե՞ս, տէր, նրա չափ որ մեզ էլ կերակրէք, մենք մեղրի տեղ ոսկի կըշինենք ձեզ համար։ Դուք ոչ մի կենդանի չունիք, որ իր կերակուրը մեզ նման ինքը լինի շինելիս և ուրիշին էլ բաժին լինի տալիս։ Այնպէս չէ՞, պարոնս։

—Այո՛, այդ կողմանէ դու ուղիղ ես. մենք դէպի ձեզ շատ ապերախտ ենք, որովհետև բոլորովին անխնամ ենք թողնում ձեզ. . .

Մեղուն ուրախացաւ տիրոջ պատասխանիցը և թռաւ նստեց վարդենու վրայ։

Մ ե ղ ո ւ

Հա՛ ծաղեցաւ արեգակը,
Հա՛ ծաղկեցաւ մանուշակը,
Մեղուն թողեց իր փեթակը
Տըզզալով, տըզզալով։
Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղրը առաւ քաղցր-անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ,
Պըզպըզալով, պըզպըզալով։
Անուշ մեղրը մանր տըղոց,
Դեղին մոմը՝ ամեն սրբոց.
Իսկ չարերին կըճ ու խայթոց,
Կըսկըծալով, կըսկըծալով։

Կենդանիների Վէճը

Եզը, Գովը և Շունը վիճում էին միմեանց հետ և ամեն մինը պնդում էր, թէ «մեր տէրը ամենից շատ ինձ է սիրում»։

—Իհարկէ, նա ինձ ամենքիցդ շատ է սիրում, ասում է Եզը. և գիտէ՞ք ինչու համար։ Նրա համար որ ես եմ նրա արօրն

ու տափանը քաշում, ես եմ նրա համար անտառից փայտ բերում։ Նա ինձ է լծում սայլումը և իր ցորենը տանում ջաղաց, այնտեղ ալիւր շինում. յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալիւրը և իր տան համար առուտուր անում, երեխանց համար հագնելիք առնում։ Ուրեմն, դուք ի՞նչ էք կարծում, ես որ չըլինէի, նա ի՞նչպէս կարող էր ապրել։

—Այդ ճշմարիտ ես ասում, ասաց Կովը։ Բայց մեր տէրն ինձ ամենքիցդ աւելի որ սիրում է, այդ նրա համար է որ նա իմանում է, որ քեզ նման աշխատասէր ու ժրաջան Եզնուկին ես եմ պահել մեծացրել։ Այս մէկ։ Մէկ էլ որ նրա բոլոր գերդաստանն իմ կաթովս եմ պահում։ Այն մածունն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանէապասը որ ամեն օր խրպշտում են, ո՞ւմ տրւածն է։ Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես չըլինիմ, բոլորը քաղցած կրկոտորւին։

—Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն կովիկ, սկսեց Շունը։ Ո՞վ կարող է ուրանալ քո լաւութիւնը։

Շատ անգամ ես ինքս էլ եմ մանակից լինում քո տրւած անուշ թանին։ Մեր տանտիկինն ամեն խնոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս։ Ով որ քո լաւութիւնն ուրանայ, երկու աչքով կուրանայ։ Ես շատ երախտագէտ եմ, ոչ ոքի լաւութիւն չեմ կարող ուրանալ։ Բայց դի՛տէք ինչ կայ։ Դուք մի՛ նեղանաք, որ մեր տէրն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում։ Դրա համար մեծ պատճառ կայ. և ահա ասեմ, թէ ի՞նչ է դրա պատճառը. . . .

Եւ Շունն սկսեց մէկ-մէկ հաշուել, թէ ինքն ինչ ու ինչ է անում։

Ասած է՝ շունը որ հաչել սկսի, էլ չի դադարիլ։ Այնքան հաչեց եզան ու կովի հետ, որ տէրն իմացաւ, գնաց նրանց մօտ, շան լեզուիցն ազատեց, ասելով. «Թո՛ղ տուր դրանց, Բոզա՛ր, դու չըգիտես որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք. ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց։

Կորած Հորթը

Ձիւն էր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին։

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծ ու ծծեր կաթով լիքը.
«Հորթուկս ո՞ւր է», նա բառանչեց,
Խեղճ պառաւին լացացրեց։

Մինչ դեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսեց մի բարակ ձայն,
Կոծն իմացաւ, որ հորթն է այն։

Կովը վազեց բառանչելով,
Պառաւը գնաց տնքտնքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ։

Ծծեց բոլոր կաթն ու տռզեց,
Տանտիկնոջը բան չըթողեց,
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին։



Մեղուն և Աղաւնին

1. Փրկանք

Ժրաջան Մեղուն ծաղկալից դաշտում իր մեղրի համար նիւթ էր հաւաքում։ Արևի տակին շատ աշխատելով, Մեղուն յոգնեց խիստ և ծարաւեց։

Նրանից մօտիկ մի փոքրիկ լիճ կար։ Մօտեցաւ լճին, վեր եկաւ ափին, որ քիչ

ջուր խմի, ծարաւը կոտրի, նոր ուժ ստանայ, թռչի տուն գնայ։ Հէնց որ կռացաւ, որ ջուր կում անի, յանկարծ գլորուեց, ընկաւ ջրի մէջ։ Նա շատ աշխատեց, որ ցամաք դուրս գայ, բայց մի փոքր ալիք նրան ներս քաշեց, ափից հեռացրեց։

Այսպէս խեղճ մեղուն ցամաքից զրկուեց, ջրի երեսին թևերը փռեց և յոյսը կտրած՝ մնաց մեկնուած։

2. Օգնութիւն

Որտեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի շատ բարեսիրտ սիրուն Աղաւնի։ Բարի Աղաւնին մօտեցաւ լճին և նայեց տեսաւ մեր խեղճ Մեղուին՝ յուսահատ փռուած ջրի երեսին։ Իսկոյն շտապեց, մի տերև կոտրեց և տարաւ Մեղուի առջևը ձգեց։

Մեղուն բարձրացաւ տերևի վրայ, խելքը ժողովեց, դէս ու դէն նայեց, որ տեսնի ով էր իր ազատողը, մահից փրկողը։ Եւ տեսաւ իր մօտ բարի Աղաւնուն։ Շատ նայեց վրան և ուզեց խօսել, Աղաւնուն գովել,

շնորհակալ լինել։ Բայց մեր բարեսիրտ սիրուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղուի միտքը, և ոչինչ չուզեց լսել նրանից. այլ թռաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ։

3. Երախտագիտութիւն

Մի օր մեր Մեղուն նոյն դաշտի միջին մի սիրուն ծաղկից նեկտար էր ժողովում և տղտղալով Աղաւնուն գովում։ Մեղուի հանդէպ, մի ծառի վրայ նստած ննջում էր ծանօթ Աղաւնին։

Հէնց այդ ժամանակ Մեղուն նկատեց որ ահա մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը կռացրած, չար օձի նման սողում է սուս փուս դէպի Աղաւնին։ Մեղուն հասկացաւ որ դա չար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թռչունին, իր բարերարին։ Եւ ճշմարիտ որ այդ էր այն մարդու չար նպատակը։

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց և հրացանը երեսին բռնեց։ Հէնց մատը դրեց

կացծառի ոտքին և ուզեց քաշել, գործը վերջացնել, այդ իսկ րոպէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի ձեռքն այնպէս խայթեց, որ նա վեր ցատկեց: Նրա հրացանը նշանից շեղուեց և իր թնդիւնով անմեղ Աղաւնուն քնից զարթեցրեց ու տեղից թռցրեց:

Այսպէս մեր Մեղուն իր բարերարին վերահաս մահից փրկեց ազատեց:

Ինչ որ ցանես, այն կըհնձես:
Արած լաւութիւնը չի կորչիլ:

Փոքրիկ Գառը

Մէկ փոքրիկ գառ, ձիւնի նման մաքուր սպիտակ,
Մի օր գնաց մօր հետ դաշտը, որ արածի:
Դաշտ որ հասաւ, սկսեց թռչել քարերի տակ,
Էլ չէր ուզում փոքր միջոց հանգիստ նստի:
Այս ու այն կողմ վազվզելով չափ էր ընկում,

Թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում:
—Ո՛րդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը.
Զգոյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը:
Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի դարձնում,
Իր խաղալն ու վազվզելն է շարունակում:
Եւ վերջապէս երբ մօր խօսքին ականջ չարաւ,
Սարի գլխին իր գժութեան պատիժն առաւ,
Մի մեծ քար կար այնտեղ ընկած. նրա ծայրում
Մեր գառնուկը թռչկոտելով խաղ էր անում.
Մէկ էլ յանկարծ նրա վրայից գլորուեցաւ,
Ոտքի մէկը տակովն էլաւ կոտրուեցաւ:

Մեղուն և Հաւը

Հաւը Մեղուի վրայ ծիծաղելով ասաց մէկ անգամ:

—Ի՞նչ անշնորհք ճանճ ես դու, ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թռչկոտում և ոչ մի բանի պէտք չես գալիս:

—Իսկ դու, հաւիկ մարիկ, ի՞նչ ես շինում, հարցրեց Մեղուն:

—Միթէ չըգիտե՞ս, թէ ինչ եմ շինում ես: Քեզ նման պարապ-սարապ չեմ տըզտզում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ ձո՛ւ. գիտե՞ս մէկ ձուն քանիսն է:

—Գիտեմ, գիտեմ, հասկացայ։ Բայց ես մինչև հիմա կարծել եմ, թէ դու օրը հարիւր ձու ես ածում։

—Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու ածել, անխելք մեղու։

—Հապա եթէ քո ածածըդ ընդամենը մի ձու է, էլ ինչո՞ւ ես հարիւր անգամ կըրկչում, թէ հա՛յ, հարա՛յ, լսեցէ՛ք, իմացէ՛ք, որ ես ձու եմ ածել։ Իմ կարծիքով այդքան կրկչալուն մի ձուն շատ քիչ է։ Այնպէս չէ՞, իմաստուն հաւիկ մարիկ։

—Բայց դու ի՞նչ ես շինում, դո՛ւ, որ իմ մի ձուն քիչ ես համարում։

—Ես ինչ որ շինում եմ, քեզ պէս կըրկչալով չեմ յայտնում ուրիշներին։ Ես գլուխս քաշ գցած մեղը եմ շինում։ Գիտե՞ս ինչ է մեղրը։ Դա հաւի կերակուր չէ, քո խելքի բանը չէ, հաւիկ մարիկ։

Պսակներ

Վարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ հեզութեան.
Թող վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վրայ։
Այնիւ սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքուշ հոտ անուշիկ։
Օրինակ անմեղութեան,
Դաշտի սիրուն դու շուշան,
Եկ զարդ եղիր մեր պարին,
Եկ միացիր մեր երգին։
Կանաչ խոտը դաշտերի
Մեր սրտին է սիրելի.
Թող ոսոր կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին։
Սիրուն կանաչ պսակին
Թող միանանք, բարեկամք.
Եւ յոյսերս անբաժան
Մնան մեզնից յաւիտեան։

Մանուշակ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկըս փոքրիկ է՝ ցած,
Աւօտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջըս ամենի տան՝
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամենայն մարդ.
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունըս է մանուշակ։

Ոսկի և երկաթ

Ոսկին երկաթին արհամարհելով, ասաց մէկ անգամ.—Երանի դիտենամ, դու ինչա՞ցու ես, որ մետաղների կարգն ես ընկել. քո սև ու ժանգոտ երեսովդ մարդու վրայ զզւանք ես բերում։ Նայիր ինձ վրա՛յ. տես ի՞նչպէս գեղեցիկ եմ փայլում, ինչպէ՞ս շողշողում։ Նայիր մեր սիրուն օրիորդների ու հարսների ականջներին ու մատներին, դու կըտեսնես իմ փառքն ու պատիւը. նայիր նրանց ճակատների շարքերին, դու

կըտեսնես իմ փայլն ու գեղեցկութիւնը. նայիր նրանց պարանոցներին ու կուրծքերին, դու կըտեսնես իմ մանեակների ու շղթաների նրբութիւնը։ Զեմ հաշւում ապարանջանները, գնտասեղները. գիտեմ որ դու այնքան կոշտ ու կոպիտ ես, որ այդպէս քնքուշ բաների վրայ ոչ ճաշակ ունիս, ոչ հասկացողութիւն։

Երկաթը պատասխանեց Ոսկուն.

—Ես չեմ ուրանում, Ոսկի՛ աղա, որ դու գեղեցիկ ես. ամեն բանի զարդն ու զարդարանքը դու ես. գինըդ շատ բարձր է, աղքատի բան չես. բայց ինչո՞ւ ես չափիցդ դուրս գոռոզանում։ Քո սիրուն օղակներդ ոչ ականջի լսելիքն են աւելացնում, ոչ մատներին ու կռներին զօրութիւն ու ժրութիւն տալիս։ Ճակատների փայլուն շարքերը գլխին խելք չեն տալիս. ոչ կուրծքերի նուրբ մանեակները սրտին գութ ու խնամք։

Ի՞նչ ասեմ մեր օրիորդներին, որ քեզ այդչափ պատիւ են տալիս, քեզ համար հալւում, մաշւում ու բարակացաւ ընկնում։ Իմ մի փոքրիկ ասեղը քո բոլոր զարդարանք-

ներից աւելի է օգուտ տալիս։ Գիտե՞ս, Ոսկի աղա, իմ փոքրիկ ասեղը քանի՞ տուն է պահում, քանի՞ որբի կերակրում։ Իմ խոփն ու ձևիչը ամբողջ աշխարհքին հաց են տալիս։

Մարդիկ ի՛նչ որ շինում են, կամ պէտք է կտրեն, կամ պէտք է ծեծեն, կամ պէտք է սղոցեն, կամ պէտք է խարտոցեն, կամ պէտք է կարկատեն։ Իմ ուրագն ու կացինը որ չըլինին, իմ դուրն ու շաղափը, իմ սղոցն ու մուրճը, իմ կտրիչն ու խարտոցը—էլ կարո՞ղ էին մարդիկ քար քարի վրայ դնել, փայտ փայտի վրա՞յ։

Ահա այդպէս պարծենկոտ ես դու, Ո՛ սկի աղա. քո փայլից կուրացած՝ ուրիշի լաւութիւնը չես տեսնում։

Արշակի շարադրութիւնը

Երկար ժամանակ սպասում էի, թէ ե՞րբ պէտք է ինձ ուսումնարան տանեն։ Ուսումնարանի մօտովն անցնելիս որ լսում էի աշակերտների երգելու ձայնը, սիրտս մի ուրիշ կերպ էր դառնում։ մտքումս ասում էի. ա՜խ, ե՞րբ կըլինի, որ ես էլ սրանց մէջը լինիմ, սրանց պէս կարդամ, սրանց պէս երգեմ, սրանց հետ խաղամ։ արդեօք՝ կարժանանա՞մ այն օրին։

Վերջապէս փափագիս հասայ։ Հայրիկս մի առաւօտ ինձ յայտնեց, թէ երկուշաբթի օրը քեզ տանելու եմ ուսումնարան, և այսօր պէտք է գնամ քո ուսման պիտոյքներն առնեմ։ Այն օրը էլ ես հաց չըկերայ չափազանց ուրախութիւնից։

Երեկոյին հայրս եկաւ տուն։ Ի՞նչ ասես որ չէր առել ինձ համար.—թուղթ, թանաք, թանաքաման, դասագիրք, տեսակ-տեսակ գրչածայրեր, գրչակոթեր, գրատախտակ, քարեգրիչներ, մատիտներ, մի քառակուսի քանոն, մի սիրուն գրչահատ։ Բոլորը ջոկ-ջոկ թղթերում փաթաթեցի ու դրի պահարանումս, մինչև հասաւ երկուշաբթին՝ ուսումնարան գնալուս օրը։

Նոր Տարի

Ահա հասաւ նոր տարի,
Հետը բերեց նոր բարի—
Մանր տղոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր։

Մանր տղայքն են ուրախ,
Ունին կաղին, կօզինախ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փշատ, ունաբ և ընկուզ։

Մանր տղայք, չըմոռնաք,
Աշխարհումն չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ ու անօգնական։

Նոքա հայր ու մայր չունեն,
Սև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէք», կասէ ձեզ Աստուած։

Մանկական Խաղ

Ա. Աղակերտ

(ասում է անգործ մանկանը)

Ո՛վ դու մանուկ ծաղկահասակ,
Հերիք անգործ, պարապ ման գաս.
Զուր մի կորցնիր ոսկի ժամերդ,
Թէ չէ տգէտ, բիրտ կըմնաս։

Բ. Աղակերտ

Խղճա, խղճա քո օրերին,
Արդէն անցաւ քո ութ տարին.
Ի՞նչ ես սովրել թափառելով,
Հասկացե՞լ ես չարն ու բարին։

Գ. Աղակերտ

Չէ որ մեղք է խղճուկ հայրըդ,
Որ կաշխատի միշտ անդադար,
Թէ ինչ է՝ իւր որդին մի օր
Դառնայ լաւ մարդ իրան համար։

Աղակերտաց խումբը

Գոնէ նայիր ու մեզ առ քեզ
Աշխատութեան օրինակ,
Եւ մի անգին ժամանակըդ
Փչացներ շարունակ։

Ե՛կ, եկ, հեր ի՛ք պարապ շրջես,
Դորանից քեզ օգուտ չըկայ.
Ե՛կ վարժարան, կարդա մեզ հետ,
Որ խեղճ հայրդ ուրախանայ։

Անգործ մանուկ

Ինչի՞ կըգամ ձեր վարժարան.
Որ զուր գերի՞ ես դառնամ.
Ազատ ուրախ փողոցներում
Լաւ չէ՞ խաղամ ու ման գամ։

Աշակերտաց խումբը

Մենք էլ երբ որ բոլորովին
Դասներս լաւ կըսերտենք
Այն ժամանակ ազատ ուրախ
Խաղ կըխաղանք ու կ՚երգենք։

Անգործ մանուկ

Հապա որ ձեզ վարժապետը
Միշտ կըծեծէ, կըպատժէ.
Միթէ այդ վատ պատժարանը
Գալ ու նստելը արժէ՞։

Խումբը

Այստեղ ոչ թէ ծեծ ու պատիժ,
Այլ ուսում են մեզ տալիս.
Միայն ծոյլ, վատ աշակերտը,
Նախատւում է ու լալիս։

Անգործ մանուկ

Հապա որ միշտ հրամանով
Դուք կըկանգնէք, կընստէք,
Եւ ինձ նման ուզած բոպէն
Ազատ ման գալ կարող չէք։

Խումբը

Ով որ չունի կարգ ու կանոն,
Նա ասւում է անկիրթ մարդ,
Կարգ կանոնը մանկանց համար
Են գովական սիրուն զարդ։

Ե՛կ, ասում ենք, եկ վարժարան,
Ձեզ կշտանալ թափառելով.
Ում ուզում ես՝ գնա հարցուր,
Մարդ կըդառնաս ուսումով։

Անգործ մանուկ

Ես էլ կըգամ, ես էլ կըգամ,
Էլ չեմ շրջիլ պարապ զուր,
Ես էլ ձեզ հետ միշտ կըկարդամ,
Էլ չեմ ընկնիլ դռնէ դուռ։

Խումբը

Ե՛կ մեզ մօտ, եկ մեզ մօտ,
Քեզ կ՚ընդունենք մեծ սիրով.
Միասին, միասին,
Խաղանք, խնդանք երգելով։

Բոլորը

Եկէք, եղբայրք թև-թևի տանք
Իրար գրկենք, ուրախանանք.
Քանի այսպէս դեռ մանուկ ենք,
Ուսում առնենք խնդանք, խաղանք։
Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,
Ուրախ երգենք ու խաղանք.

Ոչ ոք չունի մեզի նման
Ուրախ օրեր, զուարթ ժամեր,
Աշակերտաց կեանքն է անհոգ,
Սիրտն է մաքուր, գործն օգտաբեր։
Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,
Ուրախ երգենք ու խաղանք.

Կեցցէ՛, կեցցէ՛ մանուկ հասակ,
Կեցցե՛ն ուսում, խաղի ժամեր.
Կեցցէ՛ յաւէտ մեր վարժարան,
Կեցցե՛նք և մենք, աշակերտներ։

Պար բռնենք ու երգենք,
Քանի որ իրար հետ ենք.
Տրա՛յ լա՛յ լա՛յ, տրա՛յ լա՛յ լա՛յ
Տրա՛յ լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ։

Տղայոց աղօթք

Հայր մեր երկնաւոր, հայր ամեն մարդի. Դու ինձ ամեն օր տաս հազար բարի, —կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ մայր, մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր։ Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ի՞նչ տամ Քեզի. առաջևրդ կընկնիմ, կենամ աղօթքի. «Շնորհէրդ տուր ինձ, որ ծնողներիս, ուսուցիչներիս և իմ մեծերիս լինիմ սիրելի, իսկ Քեզ հաճելի»։

Առաւօտեան աղօթք

Ով տէր մեր գթոտ,
Դու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ
Քո լոյսդ անաղօտ։

Թող լուսաւորուին
Մեր միտքն ու հոգին,
Որ Քո լոյս անուան
Լինինք փառաբան։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Հայր մեր

Հայր մեր, որ երկնքումն ես, սուրբ լինի քո անունը. գայ քո թագաւորութիւնը. քո կամքը լինի երկրիս վրայ էլ, ինչպէս որ երկնքումն է: Մեր ամենօրեայ հացը մեզ այսօր էլ տուր: Թող մեր այն պարտքերը, որ քեզ պարտական ենք, ինչպէս որ մենք թողում ենք մեզ պարտ եղողներինը: Թոյլ չըտաս, որ մենք փորձանքի մէջ ընկնինք, այլ փրկիր մեզ չար բաներից, որովհետև միայն դու ունիս յաւիտենական թագաւորութիւն, զօրութիւն և փառք.—ամէն:

Տէրունական Աղօթք

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

ՄԵՍ ԱՍՆ ՊՐ-ԳԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՊ-Арм ССР
Ա. ԻՄ Ա Ինստիտուտ

ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1· Աղայեանց՝ Ուսումն Մայրենի Լեզուի· ա· տարի . . 25 կ·
2· » Ուսումն Մայրենի Լեզուի· երկ· տարի· . . 40 կ·
3· » Ուսումն Մայրենի լեզուի երր· տարի· . . 45 կ·
4· » Ուսումն Մայրենի լեզուի չորր· տարի . . -
5· Ս. Մանդինեան՝ Ընտանեկան Աշխարհ· երր· տիպ· . 25 կ·
6· » Դիւցազնական Աշխարհ· երր· տիպ· . . 30 կ·
7· » Նահապ· և Հայր· Աշխարհ· հինգ· տ· . . 65 կ·
8· » Բացատրութիւն Ընտ· Աշխարհի . . . . 75 կ·
9· » Հենչէլի Թուար· խնդիրներ· մ· ա· . . . 40 կ·
10· » Հենչէլի Թուար· խնդիրներ· մ· բ· . . . 50 կ·
11· » Բացատրութիւն ուսուցչաց համար . . . 30 կ·
12· » Համառօտ Մանկավարժութիւն . . 1 ր·—50 կ·
13· Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի Լեզու· ա· տարի· . . . 35 կ·
14· » » Մայրենի Լեզու բ· տարի· . . . . . 40 կ·
15· » » Մայրենի Լեզու· գ· տարի· . . . . . 45 կ·
16· » » Մայր· Լեզ· քերակ· տարերքը՝ մ· ա· . . . 30 կ·
17· » » Մայրենի Լեզուի քերակ· տարերքը՝ մ· բ· 50 կ·
18· » » Բացատրութիւն Մ· Լեզուի ա· տարուայ . 60 կ·
19· » » Հայրդի՝ Սրբազ· պատ Հին Կտակ· . . 50 կ·
20· » » Սրբազան պատմութ· Նոր Կտակարանի . . 50 կ·
21· Տէր-Ստեփանեան՝ Սկզբունք քր· հաւատոյ . . . . 50 կ·
22· Կոստանեան՝ Ծաղկաքաղ՝ շրջան Ա· . . 25 կ·
23· » Ծաղկաքաղ՝ շրջան Բ· . . 60 կ·
24· » Ծաղկաքաղ՝ շրջան Գ· . գրաբար· . 40 կ·
25· » Նախաշաւիղ . . . . . 25 կ·
26· Եղիշէ ըստ Անձևացեաց օրինակի· . . . . 80 կ·
27· Սիմէոնեան՝ Աշխարհագրութիւն՝ մասն բնական· . . 60 կ·
28· » » մասն քաղաքական . 60 կ·
29 Վարձելեան՝ Դասագիրք թուաբանութեան . . . 70 կ·
30· Ց· Գ· և Մ· Գ· Փոզ· Թուար· խնդիրների մ· ա· . 40 կ·
31· » Նոյն մ· բ· կոտորակներ . . . . 45 կ·
32· Այվազեան՝ Նախակրթանք՝ մ· ա· (գրաբար) . . . 40 կ·
33· Տէր-Սարգսեան՝ Հայկական գեղագրութեան օրինակներ 25 կ·
34· » Վայելչագրութեան դասաւանդութեան ելանակը 20 կ·
35· Աղանեան Սրբոյ դասագիրք· երկրորդ տարի . . . . 25 կ·
36· » — — երրորդ տարի . . . . 25 կ·
37· Տէր-Դաւթեան՝ Рурсск. слово. Учебникъ русс. языка. 50 կ·
38· Агніевъ. „Первый шагъ“, учебникъ русс. языка. . 45 կ·
39· Захаровъ. Сборникъ примѣровъ для пись. исчисленія 20 կ·
40· Мартиновскій Русскіе Писатели въ выборѣ и обработкѣ для школъ Ч. I . . . . . .
41· » Русскіе Писатели Ч. II . . . . .

304.

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ԳԵՎՈՆԴԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

---

1. Տէր-Գևոնդեան՝ Մայրենի Լեզու, առաջին տարի . . 35 կ.
2. » Մայրենի Լեզու, երկրորդ տարի . . 40 կ.
3. » Մայրենի Լեզու, երրորդ տարի . . . 50 կ.
4. » Մայրենի Լեզու, չորրորդ տարի . . 65 կ.
5. » Մայր. լեզուի բաց. ձեռնարկը. ա. տարուայ ձրի
6. » Մայրենի Լեզուի քերականութ. տարեկանը, մասն առաջին . . . . . 30 կ.
7. » Մայրենի լեզուի քերականութեան տարեկանը, մասն երկրորդ . . . . . 40 կ.
8. » Հայոցի՝ Սրբազան պատմ. Հին Կտակ. . 50 կ.
9. » Սրբազան պատմութիւն Նոր Կտակարանի . 50 կ.
10. Մանդինեան՝ Նահապետական Աշխարհ . . . 60 կ.
11. » Հենչէլի՝ բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ, առաջին և երկրորդ տարի . 40 կ.
12. » Բանաւոր և գրաւոր հաշուելու խնդ. գ. տարի 50 կ.
13. » Ընտանեկան Աշխարհ . . . . 25 կ.
14. » Դիւցազնական Աշխարհ . . . . 30 կ.
15. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի Լեզուի, ա. տարի . . 25 կ.
16. » Ուսումն Մայրենի Լեզուի, բ. տարի . . 40 կ.
17. » Ուսումն Մայրենի Լեզուի, գ. տարի . . 55 կ.
18. Գէորգբէկեան՝ Ժողովածու թուաբ. խնդիրների՝ Ամբ. թուեր 40 կ.
19. » » » » կոտորակ թուեր 50 կ.
20. Թումանեանց՝ Начальная Книга Русскаго Языка . 25 կ.

1. Գրքերի վաճառումը կանխիկ է։ Ապառիկ ոչոքի գիրք չենք ուղարկում, բայց ցանկացողների համար գրքերի արժէքը կարող ենք վերադիր անել, որ նոքա վճարեն այն փոստային վարչութեանը կամ կանոչին, որի միջոցով պիտի ստանան գրքերի ծրարը կամ սնդուկը։

2. Մեր հրատարակութիւններից զատ ուրիշ գրքեր պահանջողների պատուէրները անկատար կը մնան։

Դիմել՝ Николаю Теръ-Гевондянъ. Тифлисъ.
Հասցէս փոստատանը յայտնի է։

2075
3200